

նահանգների մէջ սկսեց տիրապետել հակատերունական և հակամագաւորական զգացմանըքը: Այն ժամանակաւայ բոլոր արևելքում նկատելի դարձաւ հակահռովմէական ուղղութիւնը: Սոյն ընազդական ժողովրդական առելութիւնը ոգեսորում էր նաև Յոյներին՝ Լատինսկերի զէմ: Յուստինեանով է սկսում այն դարձը, երբ փորձում են թօթափել լատինական պաշտօնական պալատական և դատաստանական լեզուի անհաճոյ շղթան: Ուստի աէրութեան օգտի տիսակետից կարելի է միայն ցաւել, որ չոռվմի հետ միութիւն կարցաւ: Սակայն Վիտալեանը և Յուստինեանը ընդունել առելին իրենց ուղածը և 525 թ. Զատկին՝ Կոստանդնուպոլիսը ներկայ եղաւ մի հանդիսի թէ ինչպէս Յովհաննէս պապը որին Թէոդորիիր յահճնարել էր մի բաւական չարագուշակ պաշտօն՝ զնալ և համոզել, որ Արևելահռովմը մեղմութեամբ վարուի արիանոների հետ, մայրաքաղաքի պատրիարքական եկեղեցու մէջ պատույ տեղը նստեց՝ ամեգերական պատրիարքից բարձր և պատարագ մատոյց լատիներէն լեզուով: Յուստինեանն արդէն իրապէս իւր ձեռն էր առել կառավարութեան խսկան զեկը, երբ 525 թ. ապրիլի 1-ին Յուստինը նրան կայսրակից հրատարակից և օծեց: Միեւնոյն ժամանակ նրա ամուսին Թէոդորան ևս, որ առաջ կրիկետում պարող կին էր, իւր կայսերական հօրեղօր ձեռքից ստացաւ թագ: Կայսրուհու, որին Յուստինեանը այնքան յարգում էր, նախկին կեանքը, ինչպէս որ պիտի եղակացնել նրա առաջուայ քաղաքացիական ապրուստի եղանակից, արատներից անաղարտ չէ եղել: Բայց մի բան չպէտք է մոռանալ, որ այն հայոցյանքները, որ դարելի ընթացքում թափուել են նրա զիթին, ծագում են մի պրքից, որ յիշատակարանների ամենակասկածաւոր զրագանութեան (Memoiren litteratur) կատարելաւին է: 1 Թէ ալքոհոլիք մթնոլորտից հեռացրած սենեկապետը՝ իւր դազազուած ծերութեան մէջ, անլուր և թունաւոր ստեր է հնարել, հեշտ է շատ դէպքերում ապացուցանել որով ստիպում է զգոյ

լինել նրա միւս ցուցումների վերաբերմամբ ևս: Յամենայն դէպտ Թէոդորայի վարքը իրեւ թագութիւն անարատ է: Նրա թշնամիներն էլ չեն կարող ժխտել, որ նա արտակարդ հասկացողութիւն և խելք ուներ քաղաքական և թէ եկեղեցական զործերում: Եթէ Յուստինեանը իւր արտասովոր կնոջ խրատներին աւելի լսած լիներ, զբանից տէրութեան համար դժբախտութիւն չէր ծագիլ:

(Պը շարունակուի):

Մերուակարդապետ.



ՄԱՍԿԱՎԱՐԺԱԿԱՆ – ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ



ԱՅՀՄԱՆԵՓԱԿ ԿՐԹՈՒԹԻՒՆ.



Մեզ համար այնչափ թանկ մանուկների, որոնց համար մենք ապրում և աշխատում ենք, ամբողջ ապագան, կախուած է կրթութիւնից, նոցա ապագայ վիճակի մասին հոգալիս մենք շատ անգամ անուղղելի սխալներ ենք անում այդ գաստիարակութեան մէջ, և յն երկիւղը, որով մենք սրտատրուի հոգում ենք մանուկների ապագայ վիճակի մասին, ստիպում է մեղ վստահութիւն չունենալ մանուկ բնաւորութեան վերայ և նրա զարգացման գործի ամբողջ ծանրութիւնն առնել մեղ վերայ: Սակայն կրթութիւնը մի օրդանական գործողութիւն է, որ բջիռում է ներքուստ և ոչ արտաքուստ: Յանձն առնելով մեր ոյժից վեր մի այդպիսի գործ, մենք մոռանում ենք, որ մեր պարտքն է մրայն մանկական բնոյթը սահմանափակել կարելի միջոցներով: Փոխանակ երեխայի բնաւորութեանը ազատութիւնները ծագին, մենք հաղար ու մի ձեռվ զըսպում և գուրս ենք հանում: Նորա հոգու մասաղ ցանկութիւնները: Ասում են: — արդելքները զօրացնում են բնաւորութիւնը, բայց զօրացած բնաւորութիւնը նման է բնեային գետնաքարշ կէչի ծառին, որ թէև ցրտից չի վախենում: Թէև ազատ ծիւղաւորուում է, բայց ի՞նչ. որքան տարբեր է նա բարելի հարակ կէչուց, որի հզօր, վայելչակաղմ բունը բարձր բռնած ունի նորա զանգուր գա-

1. Այս յիշատակարանի հեղինակը Պրոկոպն է:

գաթը։ Խնձ թուռում է, թէ մենք շատ քիչ ենք օգտուում ազատութեան այն օրինակներից, որ տալիս է մեզ բնութիւնը։ Սազմը ածուում զարգանուում է ինքն իրան, նրան ցուցումներ պէտք չեն։ Մասնիկները—մեր կաղմութիւնն պատրաստող այդ անտեսանելի էակները, իւրեանց գործը գիտեն գերազանց կերպով։ Նորա գեղեցիկ խոհարարները վառարան վառողները ճարտարապետները, կարգ ու կանոն պահպանողները, նամակարերներ և ամեն ինչ են։ Ստամոքսի մէջ ներս մտնող կերակրի վերայ ագահութեամբ յարձակուում է ցանցերի մի մեծ խումբ, որ արագութեամբ ջոկջոկում է կերակրի նիւթը։ Գործին մանրազնին կերպով ծանօթ լինելով նորա որոշ մասնիկներ դուրս են ձգում միւսները յանձնում են մարմնի կաղմուածք հիւսող գործավարներին, մնացած մասերով էլ տաքութիւն են տալիս մարմնի կաղմուածքին։ Եթէ մարմնի մէջ բռնի կերպով ներս է մտնում որ և է անպէտք բան, այդ գէպքում առաջ է խաղում անձնուրաց վանդակների բանակը, որն իսկոյն և եթ յառաջ է բերում բորբոքումն, անկուածների վերլուծութիւնն, շրջապատում է բռնի կերպով ներս խուժող շիւզը թարախումայ և աշխատում է ընդհանուր ոյժերով հալեցնել յանդուգն թշնամուն։

Եթէ նրանք իւրեանց նպատակին չհասնեն, այն ժամանակ թարախը հեռացնում են և շիւզը ծածկում պինդ կեղլով, որպէս զի օտար մարմինը կաղմուածքի համար լինի մի անվնաս մեռած տեղ։ Եթէ ստամոքսի մէջ պատահամբ թոյն ընկնի, որը կարող է սպառնալ ամրող կաղմուածքի քայքայմանը, այդ պահպաններն յառաջ են բերում փսխումն, որովհետեւ զգում են իւրեանց տկարութիւնը թոյնի առաջ նորա՝ կաղմուածքի մէջ մնալու գէպքում։

Եթէ մեր մարմինը պահանջում է ազատութիւն և զիտէ օգտուել նորանից, ևս առաւել այդ ազատութիւնը կարեոր է մեր հոգուն նւուցչապետ Թարխանովը իւր մի յօդուածում։ Համեմատում է միտքը թթուեցնող նիւթերի հետ և ի միջի այլոց ասում։ «Խնչպէս որ նուազդոյն չափով թթուեցնող տարբերը յարմարաւոր տեղ ընկնելով ընդունակ են ընդարձակ, երկարատես քիմիական փոփոխութեանց և վերլուծութեանց պատճառ լինելու, այսպէս և ըստ երեսոյթին ամենամոյլ զգացմունքներն ու մտքի յղացումները ընկնելով առանձին անհատի, որպէս և ամրող ազգերի, զիտակցութեան մէջ, կարող են երբեմն որպէս զարկերակ ծառայել մարդու հոգեկան կեանքի ամբողջ ընդարձակ գիտակցութեան մէջ, կարող են երբեմն որպէս զարկերակ ծառայել մարդու հոգեկան կեանքի ամբողջ ընդարձակը մեծամեծ փոփոխութիւնների նրմանութեան գործը կախումների մի սկզբունք, եթէ նորա էութիւնը չեն ըմբռնել, նորանով չեն հետաքրքրուել։

Խաղողի հիւթը գինի է դառնում սեպհական ոյժի շնորհիւ. մերանը, որ կաթը մի քանի ժամում մածուն է գարձնում, ամենեին չի ազդում խաղողի հիւթի վերայ, եթէ վերջին նախապատրաստուած շինի իւրացնելու, սեպհականեցնելու նորան, Միտքն ևս նոյնպէս չի կարող ծառայել, որպէս ասիճանարար զարգացող մի սկզբունք, եթէ նորա էութիւնը չեն ըմբռնել, նորանով չեն հետաքրքրուել։

Մարմնի կաղմուածքի ինքնազարգացման պատկերը պէտք է իրբե մի ձեռնարկ ծառայէ մեր դաստիարակների համար։ Մանկավարժը պարտաւոր է լինել միայն և միայն բարեխողձ ծծմայր։ Նորա պարտականութիւնն է ժամանակին տալ կերակուրը և հետեւ ուղեղի մարտողութեան կանոնաւորութեանը, Եթէ դասատուութիւնը կանոնաւոր է, աշակերտը հետաքրքրուում է աւելի բարձրով և ինքն ընդառաջ է գնում նրան, Մեր մէջ գեռ ևս գոյութիւն ունին ստրկութեան աւանդութիւններ։ Մէկ սիրում ենք հրամայել և չենք կարող համբերել ինքնուրոյնութեան, աւելի ևս բողոքի։ Մեր սովորութիւնն է ասել, «Սովորիր, ինչ որ հրամայում են, եթէ ոչ՝ հետացիր։» Բայց որքան էլ մարդ անդիր արած լինի դասագրքեր, որքան էլ նա սովորած լինի մեծ ծշմարտութիւններ, այնուամենայնիւ այդ բոլորը գեռ մի մեռած նիւթ կը լինի, եթէ այդ մոտերը, գաղափարները չմշակուեն սեպհական գիտակցութեամբ։ Կրթութեան հիմքը լինելու է աշակերտի ինքնագործունեութիւնը։ Ոչ ոք չդիտէ, թէ ինչ է հարկաւոր ամեն մի մարդու, նոյն իսկ ինքը, բայց տուէք նորան ազատութիւն և գուք կը տեսնէք, որ ոչ մի ծշմարտութիւն չի ծածկուի նորա գիտակցութիւնից։ Աւղիղ է, ծշմարիտ զարգացումը կամաց և աստիճանարար է յառաջ գնում։ տասներկու տարուայ ընթացքում Ամերիկաներ չի կարելի գտնել, դա այնքան պարզ է, որքան և այն, որ ցանած ցորենից իսկոյն չի կարելի հատիկ ստանալ։ Ամեն բան իւր ժամանակն ունի Աստիճանաւորութիւն և ազատութիւն, ահա այն պայմանները, որոնց միջոցով մարդը կարող է հասնել իր բարձր կատարելութեանը։

Ժամանակակից մարդու կեռնքը մի տխուր պատկեր է ներկայացնում։ Մեր առաջ տեղի է ունենում մարդկային հոգու ողբերգական սարսափելի տեսարաններ։ Այսպիսով մենք կորցնում ենք մեր յոյս և հաւատը, Ցուսահատութիւնը մեզ համար իսուընդուն է հանդիսանում, մենք թուլանում ենք փիղիքապէս, յեղաշրջում մեր ճաշակը և ցանկութիւնները։ Այս վիշտ է, բայց մի վիշտ, որ մենք ենք ստեղծում։ Գիտակցութեան վերայ բըռնանալը, զասեր անդիր անել ու թութակութիւնն կեանքի ամենացաւալի երեւոյթների է հացնում—անհամաձայնութեան խօսքի և գործի մէջ։ Գիտու-

թիւնը կը մնայ ձայն բարբառոյ յանապատի։ Տաս-
նեակ տարիներ են հարկաւոր ինքնեներ, աստուա-
ծարան, թիշկի դառնալու համար։ Այդ ժամանակի
ընթացքում որբան գեղեցիկ ճշմարտութիւններ
ենք լսում, որբան օգտակար դիտութիւններ ենք
ձեռք բերում, բայց ինչ օգտու, քանի որ զիպոմ
սահնալուն պէս սկսում ենք ապրել անմիտ և ան-
խիզ կերպով։ Խնդենները գառնում է անգում գոր-
ծակատար, ծաղրող չնարագէտներին, աստուածա-
րանը անսիրտ աստիճանաւորու, տանջող արհամար-
հող նոր Ամերիկա դանողներին։ Օրէնքներն ու կա-
նաները շուտով մոռացւում են հաճութեամբ։ Մե-
քենագործը իւր ամրողջ կեանքի ընթացքում չի
մտածում կատարելագործել այն մեքնան, որի վե-
րայ ինքը աշխատում է, թիշկը, անդիր անելով
մի կամ երկու հարիւր գեղատում, հանդստանում
դափնիների վերայ, կարծես այլեւ առաջ գնալու
տեղ չկայ թժշկականութեան մէջ։

Բանիմաց դասակարգը փափագում է «Նոր
խօսք» լսել, մինչ այդ խօսքն ամենի աչքի առաջն
է, նա նոյնչափ հին է, որչափ ինքն աշխարհը։ Նո-
րանով ենք մենք ապրում, առաջ գնում, ճշմար-
տութիւնը կանգնած է մեր սրաի գոների առաջ,
միայն թէ մենք կօյր և ծոյլ ենք։ Մենք դաշնա-
գրութիւններ ենք գրում ազատութեան մասին,
բարձրահնչյն ճառեր ենք կարդում անհատի նշա-
նակութեան և նորա յառաջադիմութեան մասին,
մինչ իրապէս ամենակորպիս կերպով ոտնակոյն ենք ա-
նում մարդու իրաւունքները, ծնողները մարդավա-
րի, լրջօրէն խօսելով իւրեանց որդոց հետ՝ արդեօք
զննում են նոցա ընդունակութեանց սաղմերը,
ի՞նչ են անում մանկավարժները, Ծանօթանում
են արդեօք նորա յիւրեանց աշակերտների հետ, ա-
կանջ և ո՞չը են գնում արդեօք նոցա հարցում-
ներին, տարակուսանքներին։ Ո՞չ ամբիոնից մինչեւ
նստարան մեծ է վիճը, Անձնական կեանքը գառնում
է աւելի և աւելի նեղ, միակողմանի, իսկ մենք
զուարձանում ենք միայն խօսակցութիւններով։ Ժա-
մանակ է ուշը դարձել, թէ արդեօք ի՞նչն է մա-
տադ սերնդի կրթութեան էռթիւնը։

«Կրթել», ըստ ժողովրդի, նշանակում է կե-
րակը և առողջ կերակրով, հնարաւորութիւն տալ
կազմուածքն ազատ զարգացնելու իւր մէջ թա-
գնուած բոլոր ոյժերն ու ընդունակութիւնները։ Թէ
ինչպէս են նայում կրթութեան գործի վերայ մեր
մանկավարժները, այդ շատ պարզ է, չըսմայում
են անդիր սովորել պատմութեան, կանոնների, պա-
տուիրանների որոշ կարգեր և այսպիսով ամեն ինչ
կատարեալ է, 8) 9 տարեկան հասակից սկսած
նստեցնում են մանկանը դպրոցում և չենց առա-
ջին օրուանից նորան գուստ են տալիս, Այդ դասը
այլևս չի մոռանում մարդուն նորա ամրողջ կեան-
քի ընթացքում, գառնում է նորան անբաժան ըն-

կեր։ Ուսման տարուայ ամբողջ ընթացքում ե-
րեխան գուստվ է զրացուած, իւրաքանչիւր տա-
ւա այդ գուստը կրթուում է, զասարանում պա-
տասխանուում պարագմունքներից յետոյ աշակեր-
տը ստիպուած է պատրաստել նորան, իսկ զիշերը
տանջուում է այդ գուստից իրեւ զարհութելի
երաղից։ «Դաս»-ի միջոցին ժամանակ ըլ կայ փոքր
ինչ հանգստանալու, կազդուրուելու։ «Դաս»-ը շատ
է, պէտք է շտապել անգիր անել շիմանալ շի կա-
րելի, մանկավարժները այդ պատճառով գուրս կա-
նեն աշակերտին գպրոցից։

Զարգացման սկզբունքը բոլոր մեթօգիկաների
և դիտակտիկաների հիմքն է, Իրականի մէջ բոլո-
րովին այլ բան ենք նկատում։ Մանկավարժները
առ հասարակ գործ են ունենուում գասարանի և ոչ
աշակերտի անձնաւորութեան հետ։ Նորա բոլոր
աշակերտների համար առաջարկում են միևնույն
գուստը, պահանջում են միևնույն պատասխաննե-
րը, նոցա համար միանդամայն կարեռը չէ այն, որ
աշակերտներից մէկն աւելի ընդունակ է երաժիշտ
լինելու, քան մեքնանագործ, մի ուրիշը չի կարող
յառաջ գնալ ընկերների հետ և այլն։ Այդպիսի
գէպքերում մանկավարժութիւնը կարելի է համե-
մատել զննուորական խստութեան, նորա զիսցիպի-
նայի հետո որ բոլորովին չի հետաքրքրուում մի որ
և է անձով, նա կառավարում է խմբեր, Մանկա-
վարժները պարտաւոր են պարապել որոշ շափով
ժամեր, անցնել ծրագիրը, կատարել հրահանդարները,
ուստի այդ ամենի համար յառաջ է գալիս մի տը-
խուր տեսարան—սանձահարելու չարաճճիներին և
ծոյլերին։

Մեր կրթութիւնը հիմնուած է բանութեանց
վերայ, Մարդս մանկավարժների համար է մի փոս,
ուր կարելի է լցնել ամենոյն տեսակ անպէտք նիւ-
թեր, որոնցից ծանրները նստելով մատաղ հոգու
վերայ, թոյլ չեն տալիս աճելու և ամրապնդելու
նորա սաղմերը, Մատաղ սերնդի առաջին տարիներն
անցնում են գասագրեր անգիր անելով։ Նա հա-
սարակական կեանքի մէջ է մտնում անթիւ աշ-
խարհական անուններ գիտենալով, բայց առանց
ընաւորութեան և որոշ համոզունկների, այնպէս
որ՝ եթէ մինչեւ անգամ ինքնուրոյնութիւն է ցոյց
տալիս, այն ևս անպատճառ մի որ և է այլանգակ ձևով
է լինում։ Աշխարհագրութիւնը, պատմութիւնը,
կրթութեան և քաղաքակրթութեան զարգացման
համար խիստ կարեռ են, սակայն մեր մանկավարժ-
ները և առանձնաշնորհութիւն վայելող գասարգերի
հեղինակները կարծում են, որ իր պատմութեան
ամրողջ նշանակութիւնը աշակերտի՝ քննութեան
առանց գծուարանալու հետեւեալ հարցերին պա-
տասխանելն է՝ ո՞ր թուին էր այն պատերազմը, որ
եղել է այ ինչ գետի վերայ, ո՞վ է հիմնել այս
կամ այն քաղաքը ևլն, և հարկ է աշակերտները

Հարկադրուած են հնազանդուել մանկավարժները
հրամաններին, նոքա պարտաւոր են անգիր սովորե
պատմութիւնը առանց հասկանալու նորա էական
հշանակութիւնը, միայն թէ մանկավարժների կող
մից գովասանքի արժանանան, Մեր մանկավարժները
աւելորդ են համարում պահանջել աշակերտից հիմ
պատմութիւնը իւր էական կէտերով, նոցա նպատակն
է անգիր անել տալ աշակերտին ազգագրական աս
զիւսակը, ի՞նչով է սկսուում և ի՞նչով վերջանում
նորա քննական տոմսնը եւն, Ո՞վ չի խոստովանում
աշխարհագրութեան գասերի օգտակարութիւնն, բայց
այդ գեռ չի նշանակում, որ անհրաժեշտ է յիշել երկ-
րագնտի ամբողջ կզզիների, Ծերի, գետերի անուն-
ները, Սովոր տերմիններ թուելը դեռ գիտութիւն,
ուսումն չէ, այն ինչ ուսման ամրող ընթացքում
աշակերտը զբաղուած է այդ մեռած բառերը կրկնե-
լով, Որպէս զի հնարաւորութիւն լինի յիշողութեան
մէջ պահել այն անթիւ պատմական և աշխարհա-
գրական անունները, որոնցով լիբն են մեր գասազըր-
քերը, պէտք է չափից գուրս ոյժ, գեռատի ամբողջ
եռանդը, Կանցնի քննութիւնը և անգիր արած բա-
ռերը շատ և շատ գէպքերում այլևս անպէտք կը
լինին, Դեռահաս մարդը գիմնազիայից գուրս գա-
լով 1—2 տարուց յետոյ կը մոռանայ մեծ մասը և
երբեմն ել աւելի քիչ բան կիմանայ, քան օրա-
թերթ կամ ամսագիր կարդացող մի մանրախաճառ,
Կարգալով մի որ և է տեղի թղթակցութիւն, նա
ստիպուած է բաց անել քարտէջը գտնելու յիշեալ
քաղաքի կամ գիւղի տեղը, Տասնամեայ անգիր
անելու արդիւնքը լինում է անտարբերութիւն և
ծուլութիւն, երբեմն նոյն իսկ զզուանք դէպի գի-
տութիւնը:

Մենք շփոթում ենք ընդհանուր կրթութիւն
նը մասնագիտականի հետ կեանքի համար կարևոր
է գիտութեան էութիւնը, նորա հետեանքը, եղա-
կացութիւնը, այն ինչ մենք առաջարկում ենք նո-
րա հում նիւթը, այն հաւաքածուն, որը կազմելու
համար երկար աշխատում մասնագետ գիտնականը,
կեանքը ծառայում է որպէս մի փորձառութիւն
գլորոցի համար, կեանքի համար հարկաւոր են զա-
ղափարներ և ոչ բառեր, Մասնագետն էլ բառեր
չի սիրում, Մեր ներկայ գասառութիւնը ծանօ-
թացնում է իւր սաներին գիտութեան հետ այնպէս,
ինչպէս ծանօթացրած կը լիներ ճարտարապետը ա-
շակերտին իւր ձեռնարկած շնութեան հետ, եթէ
ստիպէր նորան կրել նորա մօտ գերան, աղիւս
կաւ և այլն, ճարտարապետը պարտաւոր է պարա-
պել մակարդակի և նախագծի կազմութեամբ, ան-
խոհեմութիւն կը լինէր ստիպել նորան կրելու աղիւս
և այլ նիւթեր, Մանկավարժները փոխանակ անխոր-
հուրդ կերպով առաջարկելու աշակերտին սովորել
այստեղից մինչև այնտեղ, պէտք է զբաղուն մար-
դուս ինքնակրթութեան վերաբերեալ գիտողութիւն-

Ներով, Խօսակցութեան միջոցով, Նամանաւանդ ինք-
նուրոյն գրաւոր կամ ձեռքի աշխատութիւնների
խելացի ընտրողութեամբ, Կոքա պարտաւոր են ո-
րոշել աշակերտների բնական հակումները և իւ-
րեանց գիտումների արգիւնքը Հրապարակ հանել,
Այսպիսով նոքա մեծ ծառայութիւն մատուցած կը
լինէին թէ գիտութեանն, և թէ իւրեանց սաների
ապագայ բազգաւորութեանն, Ուսումնարանը կարող
էր լարորատորիայի նշանակութիւն ունենալ, որտեղ
էկապերտները գիտնական ճանապարհով կը ճանա-
չէին աշակերտների ընդունակութիւններն ու հա-
կումները և սաներին կուղարկէին նոցա ընդունա-
կութիւններին համապատասխան մասնագիտական
դպրոցներն:

Աեանքի էվոլյւցեան երկու տարբեր ձանապարհներով է կատարուում՝ մի կողմից կազմուածքը առանձնայատուկ է մարդուն, միւս կողմից նայարձարուում է տեղական կեանքին, Հէնց նոյնիսկ մարդու կազմուածքի մէջ յառաջ է գալիս նոյնանման գործողութիւն։ Ընդհանուր ինքնաճանաշութիւնն անց է կենում գործարաններին, որոնք լրացնելով մէկ մէկի, ծառայում են մի ընդհանուր նպատակի՝ պահպանել կազմուածքի կեանքը։ Պետութեանց կեանքի մէջ մենք տեսնում ենք, որ արհեստաւորների, նկարիչների և երաժիշտների խմբեր, ընկերութիւններ են կազմում։ Հանրամարդկային գաղափարին ծառայելու համար մարդկանց գործունեութիւնը, զբաղմունքը մասնագիտութեան ձև է ստանում։

Այս կրկնակի գործողութիւնը բնութեան օրէնքն է, ժամանակակից կեանքի պայմաններն այնպէս են, որ իւրաքանչիւր մարդու անհրաժեշտ է մասնագէտ լինել, Որպէս զի մարդ կերակրուի, պէտք է որ և է արհեստ իմանայ, Հասարակութիւնն այնպէս է բաժանում աշխատանքը իւր անդամների մէջ, որ ամեն մարդ աշխատի առանձին ուղղութեամբ, որովհետեւ այդպիսով է բարձրանում աշխատանքի արդիւնաբերութիւնը, Բայց ինչ մասնագիտութեան համար էլ պատրաստէ դպրոցը, այնուամենայնիւ նա աչքի առաջ պէտք է ունենայ հոգու և մարմնի զուգընթաց զարգացումը, Արհեստաւորը պարտաւոր է զբեր կարգալ, պէտք է լսէ հանրամատչելի ժողովրդական դասախոսութիւններ, կարողանայ գըրել իւր նկատողութիւնները, Մտաւոր զբաղմունք ունեցող մարդը պարտական է ամենայն օր փիզիքապէս աշխատել, Աւուումնարանը պէտք է յառաջբերէ իւր սաների մէջ այն համոզմունքը, որ հօգու և մարմնի հաւասարակշռութիւնը մի տեսակ դրաւական է յաջող պարգայի համար, Հին ժամանակներում մարդիկ ապաւինում էին իւրեանց մըկանուեներին, ձեռները և ոտները նոցա պաշտպաններն էին. այժմ դոքա երկրորդական տեղն բռնում, առաջնակարգ ոյժն է խելքը, միտքը,

Մարդն իւր առանձնասենեակումն չորս պատերով շրջապատուած գրիչ և կարինը ձեռին պատերազմ ներ է մղում և յաղթութիւններ է տանում ։ Նորա մօտ ընկած է հնազանդ մեքենան որ մշակում և ցանում է նորա գաշտերը ։ Հաւաքում է ցորենը ։ Հագնում է իւր հրամայողին ։ տանում շրջեցնում է նորան օդի մէջ ։ իջեցնում է ծովի յատակը ։ Նորա առաջ նկարում է հեռաւոր երկրուների կենդանի նկարներ ։ Նորան է հասցնում հազարաւոր վերսուեր հեռու գտանուղ հնչիւններ ։ Մարդը շունչ և երակ է գտանում տիեզերքի համար ։ Նորա կամքը տարածուում է հեռու ։ շատ հեռու անհուն տարածութեան մէջ ։ Նորա գիտակցութիւնը թափանցում է բնութեան խորքը ։ Բայց մոքի ոյժը պէտք է զգոյշ և վարպետորէն բանեցնել ։

Հոգեկան և նիւթական սկզբնաւորութեանց ձեւի և բովանդակութեան գիտակցութեան և փորձի անմիջական կապակցութիւնն չհասկանալն մանկավարժական գիտութիւնը կեղծ գրութեան մէջ է դնում ։ որի արդիւնքը լինում է այլանդակութիւն իւր բոլոր սոսկալի ձևերով ։ Մարդկային միտքը չափազանց յեղյեղուն առաձգական է ։ որով փառատերի մասին գատողութիւն տալիս ։ կարող է հասնել մինչեւ ստեղծագործող ընդունակութեանց աստիճաններն ասել է Տենդալլ այսինքն՝ թէ մարդկային միաբն ընդունակ է նորանոր գիւտեր ։ ստեղծագործութիւններ անելու ։ Այդ այդպէս է ։ բայց եթէ մենք սկսենք պարապել միայն գատողութիւններով ։ այն ժամանակ կարող է պատահել ։ որ հասնենք այն վիճակին ։ երբ մարդ կորցնում է մըտածողութեանց ամենատեսակ ընդունակութիւններն անդամ ։

Մտածողութիւնը մի կենդրունական գործունեւութիւն է ։ Գիտակցութեան աշխատութեան տեսողութիւնը կախումն ունի միայն մարդու անհատական եռանդից ։ Աւղեղի անընդհատ գործունեւութիւնը կարող է ուժասպառ անել ամրող մարմնի կաղմուածը և կարող է խելագարութեան հասցնել ։ Մենք բոլորս համարեա մտաւորապէս ։ բարոյապէս և փիզիքապէս անբնական մարդիկ ենք ։ Մեր կրթութեան այժմեան ուղղութիւնն ։ եթէ նա չբարեկիուսուի ։ ապագայում աշխարհս կը գարնի խելազորիների բնակարան ։ Հիպնոտիկի աղդեցութիւնը ցոյց է տալիս ։ թէ ի՞նչպէս մեր մէջ ժամանակի ընթացքում տարածուեց կամքի թուլութեան հիւանդութիւնը ։ Մեր երիտասարդութիւնը հետևում է եղած հօսանքին ։ պատահմունքի խաղալիկ է ։ Մեզ վերայ իշխում են կրքերը և ոչ բանականութիւնը ։ որին մենք ուժասպառ ենք անում իւր կարողութեան չափից աւելի ծանր աշխատանքով ։ երբ ցանկութիւնը դեռ նոր է յշանում մեր մէջ ։ կամքը գեռ ևս կարողանում է իշխել նորան ։ բայց քանի որ ցանկութիւնն դառ-

նում է հաստատուն ։ տեղական ։ զիտակցութեան ներգործող ոյժը կամքը տեղի է տալիս Յանկութիւնն ձեռք է բերում մի կամք ։ որ ի վերջոյ ։ Եւ պիտերի պէս գահընկեց է անում իւր ձնողին ։ Այդ ձգտող խիզախող կըքերի և բանականութեան կուուի մէջ խորտակուում է մեր «ես»ը և ուղեղի մէջ անիշխանութիւն է տիրում ։

Պէտք չէ յուսահատուել ։ ապագայում կարող է լաւ լինել ։ Բնութիւնն ինքը այդպիսի ցաւեր բուժող կը հանդիսանայ ։ Այ գայ ժամանակի երբ խրստա մանկավարժը կըդառնայ խոնարհ զիտող և օգնող մատաղ ոյժերի ։ Բնութիւնը բռնութիւն չի սիրում ։ Մի բռնանար ահա մի պատուեր օրը կայ իւրաքանչիր մարդու խորքում և որ կազմում է այն երկրային ճշմարտութիւնը ։ գէպի որը ։ թէ կուրօքէն ։ բայց մեծ ցանկութեամբ ։ ձգտում է մարդկութիւնը ։ Մարդու ոյժերը սահմանափակութեան ժամանակի և տարածութեան ձեռքով բայց նորա հոգու խորքերում թագնուած մեծագոյն խորհուրդներ կան ։ Ազատեցեք մարդուն ։ որպէս զի նա գառնայ Պիթթագորոս ։ Նիւթոն և այլն ։ Մեր առաջ բացուածում է անմիւ գիւտերի հեռանկարը ։ Մարդու մէջ անսպառ հարստութիւն ։ զանձ կայ ։ պէտք է փորել ։ գուրս բերել նոցա և ոչ թէ ծածկել ։ Պատմութիւնը պատկերացնում է մեր առաջ մարդկային մոքի կարողութեան չափը զանազան ժամանակներում ։ Մարդ որչափ ազատ լինի ։ նոյնչափ և լի ։ փարթամ հասակ և հոգու հզօր կարողութիւն կունենայ ։ եթէ մարդկութիւնը յառաջ է զնում ։ այդ ոչ թէ նորանից է ։ որ մարդիկ անդիր են անում օտարի ասածներն ։ այլ որ իւրանի որ է բանի մասին գիտակցութեամբ խորհում ։ Կողմնացցցի հեռագիտակի ։ տպագրական մեքենայի գաղափարները գտնուել են ներքին ջանքով ։ սեպհական մտածողութեամբ և ոչ թէ զամագրքերի ջնորհիւ ։ Մարդու կամքին թողեք խորասուցուելու իւր ներքին հարստութեանց մէջ ։ նա կը գանի այնտեղ ոչ միայն այն ։ ինչ որ գտել են նախորդները ։ այլ և այն ամենը ինչ որ կարելի է գտնել ։ միայն թէ ժամանակին արդելք չլինի անհատականութիւնների կատարեալ բարգացմանն ։ Մեր ները թագնուած է ամեն տեսակ ի համատութիւն ։ նորան ազատութիւն տուէք և ով կարողութիւն ունի ։ կամքի ։

Մարդմ. „Պեդելաւ-ից“

յ. 2.